

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը
2. Բարձրագույն կրթությունը
3. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր): Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
  1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
  2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
  3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագիր) պատճենը
  4. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
  5. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),
6. Աշխատանքային գրքուկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 28.03.2020թ.- 26.04.2020թ. ամեն օր ժամը 10<sup>00</sup>-ից մինչև 15<sup>00</sup>, բացի ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի մայիսի 5-ին, ժամը 14<sup>00</sup>-ին՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վազգեն Սարգսյան 13) կամ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 19 հիմնական դպրոցի կառավարման խորհուրդ /հեռ. /0312/ 3 49 24, 093340705/:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 19 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ